ԿԵՐԱՄԻԿԱ

SANT'AGOSTINO

ԿԵՐԱՄԻԿԱ & SANT' AGOSTINO ՄՐՑՈՒՅԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Մրցույթը կազմակերպվում է «ԿԵՐԱՄԻԿԱ» խանութ-սրահի կողմից, որը հանդիսանում է «Վիդա Կերամիկա» ՍՊԸ-ի առևտրային բրենդը, իտալական Sant' Agostino բրենդի հետ համատեղ:

1.2. Մրցույթն անցկացվում է 2025 թվականի հունվարի 1-ից սեպտեմբերի 30-ը՝ ներառյալ:

1.3. Մրցույթը բաց է ճարտարապետական և դիզայն-ստուդիաների, ընկերությունների, անհատ ձեռնարկատերերի, ինչպես նաև անհատ մասնագետների համար, ովքեր գործում են ճարտարապետության և ինտերիեր դիզայնի ոլորտում:

1.4. Մրցույթի մասնակցությամբ մասնակիցը ընդունում է և պարտավորվում է հետևել ներկայացված պայմաններին:

1.5. Կազմակերպիչը իրավունք ունի ցանկացած պահի փոփոխելու կամ լրացնելու մրցույթի պայմանները, առանց լրացուցիչ ծանուցման մասնակիցներին: Արդի պայմաններն ու դրույթները հասանելի կլինեն www.ceramica.am կայքում:

2. ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Մրցույթին կարող են մասնակցել ճարտարապետական և դիզայն-ստուդիաներ, ընկերություններ, անհատ ձեռնարկատերեր և անհատ մասնագետներ, ովքեր զբաղվում են ինտերիեր դիզայնով կամ ճարտարապետությամբ:

2.2. Մեկ մասնակից (ընկերություն, անհատ ձեռնարկատեր կամ անհատ մասնագետ) կարող է ներկայացնել անսահմանափակ քանակությամբ նախագծեր, եթե դրանք համապատասխանում են մրցույթի չափանիշներին:

2.3. Մասնակցության համար անհրաժեշտ է ներկայացնել իրականացված նախագիծ, որը համապատասխանում է հետևյալ չափանիշներին.
Նախագծում օգտագործված սալիկների առնվազն 70%-ը պետք է լինի Sant' Agostino բրենդից:
Պետք է ներկայացվեն բարձրորակ լուսանկարներ՝ արված նախագծի ավարտից հետո (ոչ թե ռենդերներ):

2.4. Յուրաքանչյուր նախագիծ կդիտարկվի որպես առանձին մասնակցություն, սակայն մեկ մասնակից կարող է շահել միայն մեկ անվանակարգում:

2.5. Ընկերության կամ ստուդիայի մասնակցության դեպքում մրցանակը շնորհվելու է նախագծի հիմնական հեղինակին կամ թիմի միայն մեկ ներկայացուցչին, ըստ ընկերության կողմից հայտում նշված անձի:

2.6. Մասնակիցները կարող են ընտրել, թե ինչպես կնշվի իրենց ներկայացրած նախագիծը մրցույթի հրապարակումներում՝
Միայն ընկերության անունը,
Միայն նախագծի հեղինակի անունը,
Երկուսն էլ միասին (ընկերության և նախագծի հեղինակի անունները միասին):
2.7. Մասնակցության հայտերը պետք է ուղարկվեն Ceramica Armenia-ի պաշտոնական էլ. հասցեին՝ info@ceramica.am, հետևյալ տեղեկատվությամբ.
Ընկերության անվանումը (եթե մասնակցում է ընկերություն) կամ անհատ ձեռնարկատիրոջ/անհատի անուն, ազգանունը
Նախագծի հեղինակի անուն, ազգանուն (ընկերության դեպքում՝ թիմի ներկայացված անձը)
Կոնտակտային տվյալներ (հեռախոս, էլ. փոստ)
Նախագծի անվանում
Օգտագործված սալիկների տեսակը
Նախագծի լուսանկարներ
Հրապարակման ձևաչափի ընտրություն (ընկերության անուն, նախագծի հեղինակի անուն կամ երկուսը միասին)
2.8. Կազմակերպիչը իրավունք ունի չընդունել կամ մերժել հայտերը, եթե.
Ներկայացված լուսանկարները ոչ բավարար որակի են,
Նախագծում օգտագործված սալիկների քանակը չի համապատասխանում պահանջներին,
Հայտը չի համապատասխանում մրցույթի պահանջներին:
2.9. Հայտերի ընդունման վերջնաժամկետը՝ 2025 թվականի սեպտեմբերի 30:

3. ՀԱՂԹՈՂՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
3.1. Հաղթողները կընտրվեն երկու անվանակարգերում.
ԼԱՎԱԳՈՒՅՆ ՆԱԽԱԳԻԾ – կորոշվի www.ceramica.am կայքում անցկացվող հանրային քվեարկության միջոցով:
ՀԱՏՈՒԿ ՃԱՆԱՉՈՒՄ – կշնորհվի այն դիզայներին, ով իր նախագծերում առավել ակտիվորեն ներկայացրել է Sant' Agostino սալիկների լուծումները:

4. ՄՐՑԱՆԱԿՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4.1. Մրցանակը ներառում է.

Երկու հաղթող դիզայներ կստանան 3-օրյա ուղևորություն դեպի Իտալիա՝ այցելելու Sant' Agostino գործարանը Ferrara քաղաքում:

4.2. Մրցանակը ներառում է.

Ավիատոմսեր (տարածաշրջանային մեկնման կետից դեպի Իտալիա և հետադարձ)

Հյուրանոցային կացություն

Sant' Agostino գործարանի այց և տուր

4.3. Մրցանակը փոխանակման ենթակա չէ, չի կարող փոխանցվել այլ անձի կամ փոխարինվել գումարային արժեքով:

4.4. Կազմակերպիչը չի կրում պատասխանատվություն վիզայի ստացման հետ կապված խնդիրների համար: Մասնակիցը պարտավոր է ինքնուրույն ապահովել վիզայի ձևակերպումը:

4.5. Կազմակերպիչը կարող է աջակցել վիզայի ստացման գործընթացին՝ տրամադրելով Sant' Agostino-ի կողմից հրավեր, սակայն չի կարող երաշխավորել վիզայի տրամադրումը:

5. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

5.1. Մասնակիցները համաձայնվում են, որ իրենց ներկայացրած նյութերը կարող են օգտագործվել Ceramica Armenia-ի և Sant' Agostino-ի մարքեթինգային նպատակներով:

5.2. Մրցույթի բոլոր պայմանները հրապարակված են www.ceramica.am կայքում, և դրանց ցանկացած փոփոխություն կկատարվի առանց նախազգուշացման:

5.3. Մրցույթի ցանկացած տարաձայնություն կկարգավորվի Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

Թարմացվել է՝ 30.01.2025